

11.11.2021 17:48



Հարգելի փաստաբաններ,

2022 թվականի համար նախատեսվող հանրային պաշտպանների թափուր տեղերի (հաստիքների, **այսուհետ՝ Թափուր տեղեր**) քանակը կազմում է ընդամենը **11 (տասնմեկ)**, այն է՝

- | | |
|----------------------|---|
| Երևան քաղաք | - 5 ամբողջական հաստիք՝ քրեաիրավական մասնագիտացմամբ, |
| | - 1 ամբողջական հաստիք՝ քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ, |
| Արմավիրի մարզ | - 0,5 հաստիք՝ քրեաիրավական մասնագիտացմամբ, նստավայրը՝ Արմավիր քաղաք, |
| | - 0,5 հաստիք՝ քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ, նստավայրը՝ Արմավիր քաղաք, |
| Լոռու մարզ | - 0,5 հաստիք՝ քրեաիրավական մասնագիտացմամբ, նստավայրը՝ Վանաձոր քաղաք, |
| Սյունիքի մարզ | - 0,5 հաստիք՝ քրեաիրավական մասնագիտացմամբ, նստավայրը՝ Կապան քաղաք, |
| | - 0,25 հաստիք՝ քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ, նստավայրը՝ Կապան քաղաք |

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով այն հանգամանքը, որ **գործնականում հանրային պաշտպանի թափուր հաստիքներ կարող են առաջանալ ոչ միայն տարեվերջին, այլ նաև տարվա ընթացքում**, ինչպես նաև այն, որ անհրաժեշտության դեպքում հանրային պաշտպանի գրասենյակում չընդգրկված փաստաբանների հետ ժամավճարային դրույքաչափեր նախատեսող աշխատանքային պայմանագրեր կնքելիս, որպես կանոն, նախապատվությունը տրվում է հանրային պաշտպանի թեկնածուներին՝ ցուցակում ընդգրկված փաստաբաններին,

2022 թվականի համար հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (**այսուհետ՝ Պալատ**) հայտարարում է հետևյալ մրցույթները (**այսուհետ՝ Մրցույթ**)՝

1) **քաղաքացիաիրավական և վարչաիրավական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար մրցույթ**՝ Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների Թափուր տեղերը, ինչպես նաև հետագա հնարավոր թափուր հաստիքները համալրելու համար.

2) **քրեական ուղղվածության հանրային պաշտպաններ նշանակելու համար մրցույթ**՝ Երևան քաղաքի և մարզերի հանրային պաշտպանների Թափուր տեղերը, ինչպես նաև հետագա հնարավոր թափուր հաստիքները համալրելու համար:

Տեղեկացնում ենք, որ՝

1) **Մրցույթի գրավոր փուլը** կանցկացվի ՀՀ, ք. Երևան, Ջաքյան 7-3 հասցեում (ՀՀ փաստաբանական

դպրոց, 3-րդ հարկ) **2021 թվականի նոյեմբերի 24-ին, ժամը 11.00-ին, համավարակի տարածումը կանխարգելելու նպատակով` հավակնորդների քանակով և տեխնիկական հնարավորություններով պայմանավորված, ըստ անհրաժեշտության, նաև 2021 թվականի նոյեմբերի 25-ին, ժամը 11.00-ին:**

2) Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են սույն հայտարարության հրապարակելու օրվանից մինչև 2021 թվականի նոյեմբերի 22-ը ներառյալ` յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 10:00-ից մինչև 17:00-ը ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում.

3) փոստով ուղարկված դիմումները չեն համարվի ընդունված, եթե ՀՀ փաստաբանների պալատը ծրարը փաստացի ստանա 2021թ. նոյեմբերի 22-ից հետո.

4) Մրցույթի գրավոր փուլի տևողությունը սահմանվում է 4 (չորս) ժամ:

5) **Մրցույթի գրավոր փուլը հաղթահարած հավակնորդը կհրավիրվի հարցազրույցի** Պալատի խորհրդի 2014 թվականի հունվարի 15-ի թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ի (**այսուհետ` Կարգ**) 4.11 կետի համաձայն:

Բեռնել դիմումը

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի

աշխատակազմի ղեկավար